ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«10» նոյեմբերի 2026 թվականի N: 490 - Ա ք.Գյումրի

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՋԱԿՑՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 24-ի N 309-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարանային ապահովման պետական աջակցության տրամադրման նպատակով ստեղծել աջակցող աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աջակցող աշխատանքային խմբին՝

ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի սեպտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարանային ապահովման պետական աջակցության տրամադրման մասին» N 1302-Ա որոշմամբ սահմանված գործառույթների կատարումը:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի

2026 թվականի նոյեմբերի 10 N:490-Ա որոշման

ԿԱԶՄ

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՋԱԿՑՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Արտուշ Հովհաննիսյան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ, խմբի ղեկավար,
Թադևոս Վարդանյան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ, խմբի անդամ,
Լեյլի Ասլանյան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ, խմբի անդամ,
Լիլիթ Խաչատրյան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ,
Շիրակ Երանոսյան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության ավագ մասնագետ, խմբի անդամ,
Մանուկ Մանուկյան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի ավագ մասնագետ, խմբի անդամ,
Աշոտ Թորոյան	- Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Շիրակի տարածքային բաժնի պետի տեղակալ, խմբի անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է